

•

Գեղեցիկ կանանց ընկերության համար իմաստուն մարդոց ընկերությունը թողուն կնմանի կաքաւիկի միսը թողուլ եւ թութակինն ուտել, որովհետեւ ասոր փետուրներն աւելի գեղեցիկ են:

•

Առանձնութիւնը խաբուած սիրտերու մխիթարութիւնն է:

•

Երկու տեսակ անձեր կան, որոնցմէ կրնանք ապտակուիլ առանց բարկանալու. կիներն եւ եպիսկոպոսները:

•

Աճեցէք եւ բազմացարուք, ամուսնութեան գլխաւոր վախճանն է: Բայց շատ մարդիկ կան, որ այս աստուածային խօսքերը մտիկ չեն ըներ եւ պիտի կարգուէին, ընդհակառակն, եթէ վստահ լինէին թէ չպիտի աճէին ու բազմանային. կին մը սիրելի է իրենց այնքան՝ որքան ամուլ է:

•

Ամենէն առաքինի կինն այն է, որուն վրայօք քիչ կ'իօսուի:
Կեանքը ծաղիկ մ'է, սէրն անոր մեղրն է:

•

Գեղեցիկ կանանց սիրտերը տարեգլխու շաքարեղէններու պէս հանելուկներու մէջ փաթտուած են:

•

Աւելի ականջներով քան թէ աչքերով փնտռելու է կին մը:

•

Եթէ կին մը հարիւր յանցանք ալ գործած ըլլայ՝ մի գարներ անոր նոյնիսկ ծաղիկով մը:

•

Կիներն անոր համար կրամբասուին, որովհետեւ պտուղ ունեցող ծառերուն միայն քար կ'ենտուի:

•

Օրէնք դնողներն այրեր են, իսկ բարքերը հաստատողները կիներն են: